

ՄԱՅԻ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՐ ԲՐԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւններէ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերականորէն գրոյց.
Գլխուղ վրա. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր.—ՆԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Նստած եմ թատրոնում, ոգեւորված, ուրախ
հասարակութեան մէջ: Երեք օր շարունակ
տօն էր կատարւում բեմը: Օրվայ հերոսը մեր
աղիզաբոլ թատերագործ Գաբրիէլ Սոււնդու-
կեանցն էր:

Նրան դիմում էին զանազան հիմնարկու-
թիւնների ներկայացուցիչներ, խօսում էին
ճառեր, նրան ուղղորդում էր դափնէ պսակներ
էին մատուցանում: Քիչ, շատ քիչ են պատա-
հում այսպիսի փայլուն, ոգեւորող տօնախմբ-
ութիւններ: Քիչ, ի հարկէ, հայերի մէջ:
Մարդկայինութեան, առաջնորդի կրճատից այս
դարում որքան հրաշալի էր այն ջերմ, եղբայ-
րական համերաշխութիւնը, որով ուսուց, վրա-
ցին, հայը գալիս էր սրտաբառով, անկեղծ
ցիւղաբան մատուցանելու օրվայ հերոսին...

Եւ ի՞նչ էին ասում նրան:
—Որ նա եղել է լաւ ուսուցիչ, որ նրա
տաղանդը լուսաւորել է կեանքի միջին, գար-
շնի կողմերը, հարուստ էր վատութիւնները,
անարդ սիրելի է բեւեռել հրէշներին, աղքատ-
ներին եւ մեծարել է, իր սիրող սրտի ամբողջ
ջերմութեամբ տաքացրել է կորածներին ու
թշուառներին, պատկերացրել է հարստահար-
վածների արտասուքների մէջ բերեղի պէս
մաքուր սրտեր, մարդկային արժանաւորու-
թիւններ, ազնուութեան ցնցող գաղտը:
Այսպէս էին վկայում ամենքը... Տէր Աս-
տուած: Եւ այս բոլորը կատարել է մի հայ
գրող, եւ այս փոքրիկ ծառայութիւնը մարդ-
կութեան մատուցել է հայոց գրականութիւնը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ԶԱՏ ԺԱՄԵՐ

Կիւն—ալեքսանդր եւ կիւն—ալեքսանդր

Ատլիտ—յունարէն բառ է եւ նշանակում
է ըմբիշ, գոտեմարտ:

Մատադօր—պայանքէն է եւ նշանակում
է ցուլի հետ կռուող, ցուլ սպանող:

Կայ նաեւ տօրէսադօր, որ դարձեալ
պայանքէն է եւ ունի նոյն նշանակութիւնը:

Յետոյ գալիս է նոյն դասակարգին պատկա-
նող մի ուրիշ բառ—գլադիատօր, որ լա-
տինական ծագում ունի եւ նշանակում է սու-
սերով կռուող սուսերամարտ:

Ձը նայելով իրանց զանազանակերպ ծա-
գութներին՝ այդ բաները այն աստիճան ընտե-
լացած եւ ընդհանրացած են այսօր, որ դործ
են անվտանգ անխորտակ ինչպէս ուսուց, նոյնպէս
եւ եւրօպական բոլոր լիզուների մէջ:

Յանցանք չենք գործի, հետեւապէս, եթէ
մենք էլ հիւրընկալենք այդ բաները եւ մեր
լիզուի հայերէնին մէջ:

Բացի ըմբիշ, գոտեմարտ, դիմամարտ, սու-
սերամարտ եւ այլ նոյնանուն բառերից, մենք
ունենք եւ մի ժողովրդական բառ—«փա հ-
լե վան», որ շատ լաւ ընտրուած է վերեւ յի-
շած թէ օտարազգի, թէ մեր հայկական բա-
ռերի իմաստը:

Ձեզանից ունի չէ յայտնի, օրինակի համար, հո-
շակաւոր փառելիքն Գլխանցում անունը, որ
տարիներ շարունակ, գրեթէ ամեն կիրակի,
զուարճացնում էր Թիֆլիսի խայտաղէտ հա-
սարակութեանը՝ Մուշտալիզում կամ ուրիշ
այգիների մէջ:

Բազուի մօտ մի թուրք գիւղ կայ Մաշտա-

մեր խեղճ, դեռ թոյլ, դեռ աստանդող գրակա-
նութիւնը: Այն գրականութիւնը, որ իր ազգի
խորթ, արհամարհված զաւակն է: Այն գրա-
կանութիւնը, որ ճակատի դուռով է քայլեր
փոխում, որ զօռով է փաթաթվում իր ազգի
վզին, հատ հատ ընթերցողներ է ձանկուում,
կամայ թէ ակամայ իրան կարգադնել է տալիս:
Ասում են թէ հրաշքներ այժմ չեն կատար-
վում: Բայց դուք տեսի՛ք այսպիսի տօն:
Ո՛րպիսի յաղթանակ: Յաղթանակ ցնցոտի-
ներէ մէջ, այն յաղթանակը, որ կարող է տա-
նել հացի փշրանքներով կէս-կուշտ, կէս-բաղ-
ցած ազրող մուրաղիանը:

Միթէ սա հրաշք չէ: Այո՛, եւ այդպիսի յաղ-
թանակ տօն կատարող գրականութիւնը այդ
օրերում ասում էր իւրաքանչիւր հայի ճակա-
տին. «Նայիր, տես ինչ ես դու արհամարհում:
Ու նստած թատրոնական դահլիճում, լսելով
բեմի վրա արտասանվող ճառերը, ես ինձ
հարց էի տալիս. «Ո՛րն է մեր ազգի ոյժը»:

Եւ իմ աչքի առջեւ կանգնում էր ուժեղ
ազգը: Ուժեղ է նա ոչ թէ իր անազին բազ-
մութեամբ, ոչ թէ իր հարստութեամբ, իր
ռազմականութիւնը, իր թնդանութիւնը առատու-
թեամբ, այլ...
Այդ «այդ» հէնց այն տօնախմբութիւնն էր,
որ կատարվում էր բեմի վրա, այն յաղթանա-
կը, որ գրված էր արհամարհված, քաղցած
մուրացկանի դէմքին: Այսօր ամենքն էին նրա
առաջ պատկառանքով դուրս իջնում, ա-
մենքն էին ասում թէ, այո՛, նա մեզ համար
լոյս էր, առաջնորդող աստղ էր: Կեանքի առ-
պարէզը պրպտող տաղանդ—անա մի ազգի
ոյժը:

Եւ ես տեսնում էի հայ ազգը, տեսնում էի
նրան իր հազարամեայ ճակատագրի հետ: Վա-
ղուց, առանձնապէս դարերի ընթացքում, այդ ազ-
գը հարստութեան մէջ էր օրոնում ոյժ եւ
երջանկութիւն: Եւ ի՞նչ վատասակեց—Ոչինչ:
Նրա հարստութիւնները կու գնացին բռնա-
ւորների կողորդում, նրա ոսկին սպանեց նրա
մէջ մարդկային գաղափարները:
Մենք վաճառական ազգ էինք: Լեհաստա-

ղա անունով: Անցե՛ք մի անգամ այնտեղ եւ
դուք կը տեսնէք տանեակ փառելիքներ, ո-
րոնք վաղ առաւօտից սկսած մինչեւ արեգակի
մայր մտնելը գոտեմարտում են միմեանց հետ
ընդարձակ հրապարակի վրա զուռնայի միա-
կերպ ձայների տակ:

Ձեն մոտացվել անշուշտ այն երջանիկ,
«անդարդ» ժամանակները, երբ Շուշու այժ-
մեան բուլվարի տեղը հազարաւոր ամբոխ էր
հաւաքվում շարժական մի, երբեմն եւ եր-
կու անգամ լարախաղացներին կամ կիսամերկ
փառելիքներին թամաշա անելու:

Այսպէս եւ ուրիշ երկիրներում, աշխարհի
որ կողմում կամենաք:

Մարդուն յատուկ են զուարճութիւնները:
Սկզբում անմեղ նրանք հետզհետէ փոխվում
են արդէն արիւնքոտ, մահաբեր զուարճութիւն-
ների, երբ մարդու մէջ յղանում են վայրենի-
խառնակներ, երբ բանական մարդու մէջ
զարթնում է արիւնածարս անբան գազանը:

Յունաստանը յայտնի է իր աղետներով,
հին Հռոմը՝ իր գլխաւոր տօնախմբով, Սպանիան՝
իր տօրէադօրներով եւ մատադօրներով:

Այսօր անգամ ոչ միայն Սպանիայում, այլ
եւ Ֆրանսիայի նման քաղաքակրթված աշ-
խարհում տեղի են ունենում ցուլամարտական
զուարճութիւններ:

Պարզ, անմեղ զուարճութիւնները չեն կը-
տացնում մարդու աչքն ու սիրտը: Նա ծարաւ
է ցնցող, յուզող, ալիւտող տեսարանների:

Եւ անա, յատկապէս դրա համար, սարքում
են ժողովրդական խաղեր եւ զուարճութիւններ:

Մի տեղ կը տեսնէք մարդը մարդու հետ
գոտեմարտելիս, կուելիս, դեմին տապալիս,
միւր ձևով տեսիլս...

Մի ուրիշ տեղ կը տեսնէք, թէ ինչպէս
վիթխարի ցուլ խրել է իր անազին եղջիւր-
ները քաջամարտիկ տօրէադօրի ճարպալից
փորը եւ արիւնաշաղախ բարձրացրել նրան

նուստ մեզ չոյեցին, քանի որ մենք հարկաւոր
էինք իբրեւ առեւտրականներ. ապա մեզ այն-
պէս կլանեցին, որ հետք անգամ չը թողեցինք:
Հնդկաստանից մեզ դուրս մղեց անգլիացին,
տեսնելով մեր մէջ վտանգաւոր մրցակից: Նոր-
Ջուղայում Սէֆէվի Շահերը մեր արեւը խմե-
ցին, որովհետեւ մենք շատ էինք հարստացել
ու դարձրին մեզ դռնէ դուռը թափառող մու-
րացկան:

Ի՞նչ հետքեր մնացին մեր հարստութիւնից,
մեր վաճառականական հանճարից:

Ոչինչ: Քիչը, շատ քիչը մեզ գովեցին:
Մեծամասնութիւնը սկսեց մեզ ատել: Մենք
հրէաների պէս մի բան դարձանք:

Ընդամենը մի յիսուն տարի առաջ մենք
սկսեցինք եւ մտքի մարդ դառնալ: Ուսում էինք
առնում, գրականութիւն հիմնեցինք: Բայց գրա-
կանութիւնը քիչերի համար էր միայն. «ազգա-
սէրների» համար: Ահապէս մեծամասնութիւնը
գնաց դարձեալ պապականական ճանապարհով,
դարձեալ պաշտեց հարստութեան կուլուր: Ու-
սում, այո՛, մենք առնում էինք, բայց մեծ մա-
սամբ չանադրողական նպատակով, հարստու-
թիւն աւելացնելու մտքով: Եւ մայրենի գրա-
կանութիւնը մնաց արհամարհված, մնաց «ազ-
գասէրների» գործ:

Այսօր, երբ այդ արհամարհված, խորթ գա-
ւալը, այդ «ազգասէրների» գործը այնքան չօ-
ղափելի փաստերով տօնում է այն գաղափարը,
որ նա է մի ազգի ամենամեծ ոյժը,—այսօր
կարող է արդեօք հայի սիրած ու պաշտած նիւ-
թական հարստութիւնը ցոյց տալ, թէ նա էլ
կարող է յարգել տալ, սիրել տալ մեր ազգը,
կարող է դռնէ մի հատ գաղափարական երկր-
պագու ցոյց տալ, մի այնպիսի երկրպագու, որ
վկայէ աշխարհի առաջ, թէ նա բարերար ըն-
դունակութիւն է, թէ հայի վաճառականական
տաղանդը ազգերի եղբայրակցութեան գործին
է ծառայել եւ կատարել է որ եւ է հանրա-
մարդկային, առաջադիմական դեր...

Ո՛չ:
Եւ դրէք միմեանց կողքին այս երկուսը: Մի
համեստ, խեղճ գրականութիւն եւ վաճառակա-

օղի մէջ, նման այն շարածի երեխաներին,
որոնք սուր ճիւղովը անց են կացնում ձմե-
րուկի մասի կեղեքի մէջ եւ դէպի վեր փըր-
փրացնելով զուարճանում:

Մի երրորդ տեղ երկու ամենի գաղափարներն
են միմեանց միտ ու ոսկրներ քրքրում, լա-
փում, ուղեղն ու փորտիքը քծնում, տաք
արեւը հոսեցնում լայնատարած կրկէսի վրա՝
բերաւոր հանդիսականների ոտների տակ:

Նայում է մարդը այս արիւնքոտ, վայրենի տե-
սարաններին, մաքեր քստմեցնող այդ զուար-
ճութիւններին, նայում է եւ կշտանալ չը կայ:

Հին Յունաստանը, Հռոմը, ինչպէս եւ մեր
ժամանակներում Սպանիան եւ Ֆրանսիան
տուն են միայն տղամարդ—ատլետներ, աղա-
մարդ—գլադիատորներ, եւ այլն:

Կնոջ ճակատին դրոշմված է եղել «թոյլ
արարած» խօսքը, որը եւ անջինջ, անփո-
փոխ մնալով հասել է մինչեւ մեր օրերը:

Թոյլ, երկշտ, խեղճ—անա բառեր, որոնք
ընտրուում են կին-մարդուն:

Զօրեղ, անվեհեր, համարձակ անականները
միշտ վերագրել են տղամարդուն:

Եւ արդարեւ...

Խցեցե՛ք տղամարդու քիթն ու բերանը
թաշկինակով, դէն կտրեցե՛ք նրա ալ բազուկը,
նա չնչապաւո, օրհասական րօպէներում քա-
ջաբար կը կուէ ձեզ հետ եւ կը մեռնէ յաղ-
թած կամ յաղթված:

Բայց փորձեցե՛ք թիթեակի հուլ տալ կնոջ
ձախ ձկովի թէկուղ հէնց ծայրը եւ նա ու-
շաթալի վայր պիտի ընկնէ ձեր ոտների տակ:
Ինչպէս մի գնդակահար ճնշողով:

Տղամարդ երկտասարդը համարձակ դուրս է
գալիս գաղափարների ահեղ թագաւորի՝ առիւծի
դէմ: Մերկ ձեռքերով նա պատրաստ է մար-
տնչել ժանիքները ճնշողացող կատաղի գայլի
հետ: Մինչդեռ իր ճուռերին պաշտպանող մի
անմեղ թիթեակահար կամ բոյնը կորցրած եւ ահ

նական անազին, չլացնող ձօխութիւն: Մէկը
աղքատ, իր գոյութիւնը հաղիւ հազ պահպա-
նող, միւրը միլիոններով փայլող, ուժեղ, ամե-
նակարող: Բայց տեսե՛ք ինչն են անում այդ
երկուսը:

Մէկը, փոքրիկը, աղքատը, մոռացվածը գլուխ
իջեցնել է տալիս իր առջեւ, հրատարակվում է
բարերար ամենքի համար,—ամենքի, առանց
խտրութեան կրօնի եւ լիզուների: Այդտեղ
ազգի ոյժն է, իսկ միւրը, նա մրցութիւն է,
կատաղութիւն եւ բորբոքող մրցութիւն: Նա ան-
բողջապէս ծուռատող մագիլներ է, անողորմ ճի-
րաններ: Նա միայն անէ՛ծքներ է բարձրացնում
աշխարհի վրա. նրան ասում են, ինչպէս ասում
է ստրուկը իր տիրոջը: Տնտեսական հարստու-
թիւնը, վերջապէս նրան իբրեւ միակ հասկա-
նալի պաշտամունք, չէ կարող մի ազգի համար
ոյժ դառնալ, չէ կարող նրան պահել այն դա-
ղափարական հողի վրա, առանց որի մարդ-
կութիւնը միմեանց պատառող գաղափարների մի
վոհմակ է միայն...

Մի ազգ ուժեղ է, երկարակեաց է իր մշտ-
նով, իր ստեղծագործող տաղանդով: Փոքրիկ,
երեք գործողութիւնից բաղկացած մի կոմե-
դիայի ծերունի հեղինակը խոնարհեցնում է
իր առջեւ ազգերը եւ լիզուները: Յոյց տուէ՛ք
միլիոններ մի այնպիսի կոյտ, որ այսքան բան
լինի կատարած: Յոյց տուէ՛ք ինձ մի այնպիսի
մեծատուն, որ «Պէպօն» չափ բարձրացնէ մեր
ազգը, այնքան ուժեղացնէ նրան:

Սա փաստ է: Փաստ է, սակայն, եւ այն, որ
մենք արհամարհում ենք այն ոյժը, որ մեր
իսկական մեծութիւնը պիտի կազմէ, այն հիւ-
թերը, որոնք մեզ պիտի պահեն ու պահպա-
նեն:

Հասկանալի չէ, որ մենք արհամարհում ենք
մեր ամբողջ գոյութիւնը: Աւելի ի՞նչ աղղու
պատկեր էք ուզում:

Հայը չէ կարող հայերէն գիրք. հայը կար-
ծում է թէ մայրենի գրականութիւնը «ազգա-
սիրութիւն» է, իսկ բուն, իրական երջանկու-
թիւնը, գոյութեան միջոցը խանութն է ու
տոկոսը:

ու սարսափից դէս ու դէն վաղվող մի շղկը-
ված մուկ կարող է միմեանց ասած, «հում» պա-
անել մի օրերից էլ կամենաք:

Ի՞նչ է պատճառը:

Ճակատի գրեւծք է սա, թէ Աստուծու
պատուիրանը:

Ո՛չ այս, ի հարկէ, եւ ոչ այն:
Պատճառները շատ են. բայց ամենազրաւո-
րը՝ կին-մարդուն, այսպէս ասած, «հում» պա-
հեն է, քնքոյ մեծացնել է:

Մտող—մայրը, հէնց օրօրոցից սկսած՝ են-
թարկում է տղայ—երեխայի մարմինը զանա-
զան մարդութիւնների, տրորելով, ձգձգելով,
ալ ու ձախ վեր ու վայր թափահարելով բա-
զուկները, ոտները, վիզը եւ այլ օրգանները,
մինչդեռ՝ աղջիկ—երեխայի հետ նա վարվում
է անով եւ մեծ զգուշութեամբ—մի գուցէ ո-
տը դուրս ընկնի, կաղ մնայ, մի գուցէ վիզը
ծուլի, կուռը կոտրվի, «չօլախանայ»...

Տղան կարող է կաղ էլ մնալ, կոյր, «քա-
ջալ», «չօլախ» լինել, հոգ չէ, եօլայ կը գնայ՝
տղայ է... Հապա աղջիկը:

Օ՛, աղջիկը... Աստուած չարից, փորձանքից
ազատէ:

Աղջիկը եթէ ունեցաւ ֆիզիքական որ եւ է
պակասութիւն—օրինակի համար երեւի վրա
երեւաց մի հատ ծաղկահատիկ, թէ անկող-
մեան ծամը մի սանտիմետր կարճ դուրս եկաւ
եւ այնպէս էլ մնաց—անազին դժբաղդութիւն
է ծնողների համար:

Եւ այդ դժբաղդութիւնից ազատ մնալու
համար ծնողները ամեն մի քայլափոխում աշ-
խատում են հետեւ պահել աղջիկ—երեխային՝
ինչ տեսակ ուզում է լինի, ֆիզիքական վար-
ժութիւններից, մինչեւ անգամ մանկական
խաղերից, առանց որոնց երեխան մեռած է:

Եւ այսպէս աղջիկը աճում է ինչպէս ջեր-
մասնեակում տնկած մի ծաղիկ, մարմնով
քնքոյ, թոյլ: Նա չէ զարգանում ֆիզիքապէս.

Այդպիսի ազդը ոչինչ ոյժ չէ կարող ունենալ:
Այսպէս է առում ժամանակը: Այսպէս էր վկայում «Պէպոսի» երեսնամեակը...

Լ.

ԳԼՈՒԽ Դ ՎԱՅ...

Տեղին «ДОНСКАЯ РЫБЪ» լրագրում Պետերբուրգի մի հետաքրքիր թղթակցութիւն էր կարդում, կարդում էր յիշում—հայ—գլխուղ վայր...

Թղթակցը հաղորդում է մի իրողութիւն, փաստ, որը ինքը տեսել է, որին ինքն է վկայ... Իրողութիւնը մի թշուառ իրողութիւն է փաստը կեղծ ու յեծ...

Մի պարոն, որը ուսումը ստացել է հայրենակիցների հաշիւով եւ մի քանի ժամանակ առաջ Նոր-Նախիջևանում հայութիւն էր քարոզում, խնդիր է ներկայացրել կառավարութեան: Խնդիրը լի է կոպիտ ակնարկներով: Խնդրատուն ապացուցանում է, որ պէտք է հայաբնակ Նոր-Նախիջևանը միացնել ուսումնական Բոստովի հետ, որպէս զի ոչնչացվի հայ տարրը...

Ահա ինչ է դիտել իր աչքերովը «ДОНСКАЯ РЫБЪ»-ի լրատուն:

Բոստովը ուսումնական է, ինչպէս եւ Նոր-Նախիջևանը հայաբնակ չէ:

Կան Բոստովում հայեր եւ կան Նոր-Նախիջևանում ուսման:

Նոր-Նախիջևանի ուսմանը բոլորովին չեն ուղղում միացնել Նոր-Նախիջևանը Բոստովի հետ:

Այստեղ չը կայ նշոյլ մեծ ազդասիրութեան, այստեղ կայ լոկ անտեսական հարց:

Մեր քաղաքը ունի քան հազար գետնափն հող, իսկ Բոստովը—երեք հազար:

Քան հազարը աւելի է, քան թէ երեք հազարը: Երեքսան գետն, որ աւելի լաւ է ունենալ քան խնձոր, քան թէ երեք:

Մենք ունենք քան խնձոր եւ չենք ուղղում փոխարէն սաւանալ երեք խնձոր:

Պարզ է:

Ի հարկ է, պարզ է:

Բայց հայակերները ուրիշ տեսակ են հասկանում: Նոր-Նախիջևանը նրանց հայակերութեան նիւթ էր դարձած, մի պարարտ հող... եւ մարդակերները սերմանում էին իրանց ազգատեղիները, նախանձի, ստոր գզացմունքների առատ սերմերը: Այժմ սերմացանի դերում հանդէս է գալիս ինքը հայը:

Մէկ կողմ թողած ամօթը, նա լրբութեամբ պնդում է այն, ինչ որ կարող չէ ընդունել ներքա խելքը: Նա ամենամոթեալը ստում է:

Նրա մկանունները անլարժ, անշարժ, անկենդան են: Եւ նա մնում է, իր ամբողջ կենսութիւնը մէջ, ճշմարտ, բառի ընդարձակ իմաստով:

Սակայն երկար, դուրս ընդ միշտ էլ պիտի մնան այս դրութիւնը:

Գնա լիցի:

Փոխակցին կրթութեան, դաստիարակութեան եղանակները: Առաջ եկան, հետեւապէս, ուժեղ, համարձակ, ֆիզիկական զարգացած, կատարելութեան հասած աղջիկներ եւ կանայք:

Եւ այսօր մենք տեսնում ենք գեղեցիկ եւ թոյլ սեռի ցանկուն կին-ատեններ, կին-մատաղօրներ, ասել է՝ կին-փահիկներ:

Շնորհիւ ժամանակակից ազատ կրթութեան եւ դաստիարակութեան՝ կնոջ համար մտաւոր ասպարէզում այլ եւս տեղ չը մնաց տղամարդի հետ մրցութեան մասին:

Մտաւոր ասպարէզի վրա գրեթէ բոլոր մասնաճիւղերը իր սեփականութիւնը չինելով, կինը սկսեց փոքր առ փոքր ուշք դարձնել նաեւ ֆիզիկականի վրա, փորձել իր թոյլ ոյժերը մարմնի մարզութեան ասպարէզում: Եւ նա ունեցաւ աղօթութիւն...

Մեզ շատ լաւ ծանօթ են արուեստագէտ կանայք, որոնք ամեն օր հանդէս են հանում իրանց ֆիզիկական հմտութիւնները ցերեկներում, ինչպէս լաւ ձի նստողներ եւ լարախաղաց գինաստներ:

Այդ ճանապարհի վրա միշտ առաջ ընթանալով՝ վերջերս մի խումբ օրիորդներ եւ կանայք այն աստիճան զարգացրին իրանց մկանունները, որ ատենների պաշտօնով մտան Վիեննայի «Կոլլոսումում» կաֆէ-շատան թատրոնը եւ տուին մի շարք գոտեմարտական ներկայացումներ:

Թատրոնական վարչութիւնը, քաջաբերված անսպասելի աջողութիւններից՝ կին-ատենների համար նշանակեց երեք պրեմիա. առաջինը՝ 1500 ռուբլի, երկրորդը՝ 1000 ռ. եւ երրորդը՝

Ո՛վ է այդ պարոնը: Թղթակցը լուում է այդ մասին: Ակսիոս: Եթէ միայն մենք իմանայինք, մենք կը հանէինք հրապարակ:

Ինչու ծածկել:

Մեթէ նա չը գիտէր, ինչ է գրում, ստորագրում, մանաւանդ եթէ ինտելիգենտ մարդ է: Ոչ, հրապարակ հանեցէք այդպիսիների անունները:

Հրապարակ հանեցէք, որպէս զի ամաչեն, եթէ ամօթ ունեն, իսկ եթէ ոչ, եթէ ամօթը չէ կարող կարմրացնել նրանց թշերը, դարձեալ հանեցէք հրապարակ, որպէս զի մենք բոլորս թքենք, թքենք անամօթ երեսներին... Հրապարակ...

Մարդկութեան պատիւի համար մենք պահանջում ենք անուններ:

Գր. Չախուչեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 3-ին

«Մշակի» 95 համարում կարդացի մի լուր, որը վերաբերում էր ինձ: Մի օր եւ է վատ, զգուշիկ եղելութիւն հրապարակով յայտնել եւ ենթադրել յանցաւորին հասարակութեան դատաստանին եւ զգուշանքին, անպայման հարկաւոր է, բայց մի պարզ եղելութիւն կերպարանափոխել: Դա, իմ կարծիքով, անուշադիւն անաղնութիւն է: Մենք մի քանի խօսքով առաջ կը բերենք ճշգրիտ եղելութիւնը՝ հետաքննելու համար մեղանից զրպարտութիւնները: Երեք տուն իմ ժողովրդից վաղուց ինձ հետ անհնական թշնամութիւն ունեն եւ առաջ մի քանի անգամ զանազան լուրեր հնարելով՝ բողոքեցին հոգեւոր իշխանութեանը, բայց բողոքը ընկնելով եւ անհիմն ճանաչելով, մնաց անհետեւանք: Այս տարի եւս նոյն անձինք նորից փորձեցին վնասել ինձ եւ այլ պատրուակով քան հոգեւոր ստորագրութիւններ հաւաքելով՝ բողոքեցին Գորտ յաջորդին: Ես իսկոյն յայտարարութեամբ խնդրեցի յաջորդին անձամբ գալ եւ քննել զրանց բողոքները: Ապրիլի 22-ին յաջորդը, յարգելով խնդրս, եկա գործակալի եւ Գորտ կառավարութեան անդամի հետ միասին: Գննելով զրանց բողոքները, յաջորդը գտաւ միանշանակ պատիւն եւ ստաւ, մանաւանդ ստորագրութիւնները, որոնք բոլորովին հերքեցին:

Այսպէս վերջապէս բոլոր առանց կրօնափոխութեան եւ առանց ապացուցելու իմ զգուշիկ արարքները, ինչպէս յայտնել էր լրատուն: Բայց լրատուն չէ բաւականանում այդ բողոքով, այլ առում է, որ իբր թէ «անցեալ աշբի եւս կրօնափոխ են եղել մի քանի ընտանիքներ»: Բայց այդ լուրը իր ժամանակին հերքեցին, ցոյց տալով, որ սուտ է եւ միայն մի երիտասարդ, սիրահարվելով վրայուհու հետ, կրօնափոխ եղաւ:

Վերջապէս եմ սրանով եւ յանձնում եմ

500 ռ. Բացի դրանից նա ընտրեց պսակաւ լիտ եւ հասկացող անձերից զատաւորներ, որոնք պիտի ներկայ գտնվեն ներկայացումներին, ըստ արժանոյն գնահատեն կին-ատենների խողերը եւ որոշեն նրանց տրվելիք վարձատրութիւնները:

Մրցման հանդէսի համար առ այժմ գրված են. Միքի Բէքը՝ Վիեննայից, Իւլիա Ֆրանկ՝ Միւնխենից, Գիգելա Շաէլլիգեր՝ Բեռլինից, Մ. Բերնարտը՝ Պարիզից, Մարսել Դարվիլ՝ Մարսելից, Օլիւի Լիոնից, Բօգա Կատուկալա՝ Մոսկվայից, Լիւիս՝ Շամպայնից եւ ուրիշները:

Մենք չենք կասկածում, որ կին-ատենների թիւը օր ըստ օրէ կաճի, կը կրկնապատկվի, կը տասնապատկվի:

Կարգանք էմանսիպացիա ձեռք բերած եւ ֆիզիկական զարգացած սպանիական բազմաթիւ կանայք մէկի ինքնակենսագրութեան հետեւեալ կտորը:

«Մանկութիւնից մենք, աղջիկներս, անչափ սիրում էինք ցուլերի մարտը եւ բուն ցանկութիւն էինք զգում, որ ճակատադիր մի հրաշքով մեզ դարձնէր տղաներ, —պատմում է կին-մատաղօր Լօլիտան, որ մի եւ նոյն ժամանակ եւ շատ նշանաւոր գեղեցկուհի է:

«Այն ժամանակ մենք առանց տատանվելու, առանց երկար-բարակ մտածելու կընտրէինք մեզ գրաւող միայն ասպարէզը՝ ցուլամարտութեան կրկնութիւնը: Ես բաղդ ունեցայ իրադրոյթի մի փոփոխ: Ընդամենը զեռ չորս տարի է (այժմ եմ 20 տարեկան եմ), ինչ եւ գործում եմ կրկնութիւն վրա եւ տեսնում եմ, որ չեմ սխալված՝ յոյս դնելով փայլուն աջողութիւնների եւ ապահովված ապագայի վրա: Ես ձեռք եմ բերել, մի այդպիսի համեմատաբար կարճ ժամանակում, իմ պիտի, փառք, փառք, այլ եւ ամենակարգ կարողութիւն, որը ինձ երեք չէր տալ ոչ մի արտիստիքական բազմամասյ զործունէութիւնը:

Բայց սրովհետեւ ցուլի հետ կուեմ, վերին

ինձ եւ լրատունին հասարակութեան դատաստանին:

Գրիգոր քահանայ Մանուկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօրվանից սկսված Անդրկովկասեան երկաթուղու գնացքների երթեւեկութեան համար նշանակված ժամերի մէջ մտցնվում է փոփոխութիւն:

Ուրբաթ, մարտի 4-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում տեղի ունէր դերասանուհի Պասխալովայի ընէնֆիւր, Խաղում էին Դիւմա-ի «Կամիլիա»-ի տիկին: Կիւրա, Թատրոնը ծայրէ ի ծայր լինէր հանդիսականներով: Պասխալովայի մտածված եւ զգացված խաղը առիթ եղաւ ոգեւորված ցոյցների եւ բուն ծափահարութիւնների: Տրվեցին բազմաթիւ փունջեր եւ մի քանի արժէքաւոր ընծաներ: Կարգացվեց մի ուղերձ, որի մէջ յայտնված էր այն միտքը, որ Պասխալովա եկաւ Թիֆլիս առանց ընկալմանի եւ իր տաղանդի չնորհիւ շատ կարճ միջոցում գրաւեց հասարակութեան ամենալիք ուշադրութիւնը իր տաղանդաւոր եւ լուրջ խաղով բազմաթիւ պիէսներով:

Առաջիկայ 1902 թւականից, Երեւանի երկաթուղային գիծը կանցնի Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան ձեռքը: Երեւանեան ճանապարհի վրա երկաթուղու շինութիւնը աւել է առաջ գնում, —թէ երկաթուղային գիծը եւ թէ կայարանների շինութիւնը արդէն վերջնական կերպարանք են ընդունում: Բոլոր կայարանները 8 են: Զանապարհի ամբողջ երկարութիւնը 144 վերստ է:

Պարտադիր կրթական ղէնդ է սահմանված երկաթուղական այն գործակալներ համար, որոնք պէտք է ծառայեն երկաթուղային շարժման գործերում, սկսած տէլեգրաֆիստից մինչեւ կայարանի կառավարիչը: Սկզբում, իբրեւ փորձ, անհրաժեշտ է համարված սահմանել ընդհանուր կրթական ղէնդ ոչ ստոր, քան այն, որ պահանջվում է գործի մէջ երկրորդ կարգի արտօնութիւններով ծառայելու համար:

Յինչնադական կայսերական սենատը, որպէս պատասխան ֆինլանդական կանանց ընկերութեան միջնորդութեան՝ բանալու կանանց առաջ գիւղատնտեսական կրթութեան ասպարէզ, բացատրեց, որ Հէլսինգֆորսի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի արքունիական բաժանմունքը կարող են մտնել ինչպէս տղա-մարդիկ, այնպէս էլ կանայք: Ոչ մի արգելք չը

աստիճանի կատարելութեան հասցրած ցուլին սպանելու այնքան էլ հեշտ բան չէ, մանաւանդ մի 18—20 տարեկան աղջկայ համար, ուստի եւ տաքարին եւ տաք բնութեան տէր երկ-տասարդ սպանուհիները երկար ժամանակ եւ զարմանալի եռանդով վարժվում են իրանց ընտրած ասպարէզի եւ պաշտօնի համար:

Վարժութիւնների համար նրանք չեն վերցնում, յայտնի բան է, կենդանի ցուլեր—շատ թանգ կարող էին նստել սպանիացի գեղեցկուհիներին այգորինակ վտանգաւոր դասերը: Նրանք վերցնեցին մի փայտից շինած խրտուի-լակներ եւ նրանց վրա կատարում են իրանց քաջագործութեան փորձերը:

Մի ամիս, երկու, երեք, հինգ ամիս եւ ահա գեղեցկուհի—մատաղօր երկաթէ ձողը ձեռքին, հոյակապ ցուլի դէմ առ դէմ կանգնած՝ 14—15 հազարաւոր հանգրիսականներին առաջ՝ Բար-ցելօնի՝ Վյաննայից ցիլիկում, որ միակն է ամբողջ աշխարհի մէջ՝ այսօր:

Մոլացած բազմութիւնը վերին աստիճանի նուրբ ուշադրութեամբ հետեւում է կին-մատաղօրի իւրաքանչիւր ամենափոքր շարժումներին:

Յիկի կառավարիչը նշան տուեց...

Քաջասիրտ մատաղօր Լօլիտան կարմիր բաճկոնը հագած, ինչպէս մի կատարեալ տղամարդ, առաջ է գալիս դէպի աչքերից կրակներ թափող հսկայական ցուլը այնպիսի անվեհերութեամբ եւ ինքնավստահութեամբ, որ կանայք թէ նրա առաջ կանգնած է մի վտիտ ուլ... Մօտենում է, մի քանի թռիչքներ է գործում եւ յարմար բոլէն որսալով՝ յարձակվում է չորրորդանի ահեղ թշնամու վրա եւ վզի մէջ խրում իր սուրը՝ մինչեւ իսկ կոթը:

Վիժեց յորդառատ արեւնը: Կարմիր փրփու-րով ծածկվեց ընդարձակ կրկնալ մակերեսովը: Վիթխարի անասունը մի քանի յուսահատ, օրհասական պոռոյներ արեց եւ ահադին մարմնի բոլոր ծանրութեամբ գետին տապալ-

կայ կանանց համար մանկու նաեւ ստորին եւ բարձրագոյն երկրագործական դպրոցները:

Տիկին Կալաչովայի նախաձեռնութեամբ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիները, Պետերբուրգի մօտ, երկրագործութեան միջնատրութեան կողմից յատկացրած հողի վրա, հիմնվում է գիւղատնտեսական ապաստարան այն կանանց համար, որոնք զոհ են դարձել իրանց թուլութեան կամ բռնաբարութեան, բայց որոնք ցանկութիւն ունեն վերադառնալ դէպի աշխուշտ: Ապաստարանը իր հովանաւորութեան տակ է առել կանանց պաշտպանութեան ուսաց ընկերութիւնը:

ՍՕԶիի8 մեզ գրում են. «Երեւ ամառանոց Սօչին մեծ նշանակութիւն է ստանում. իր գեղեցիկ ծովեզերքով եւ հարուստ բուսականութեամբ նա գրաւել է շատերի ուշադրութիւնը: Քաղաքի երկու կողմերում, 12 վերստ խնդու երկարութեամբ, եղած բոլոր հողերը գնել են ունեւոր եւ պաշտօնատար անհաւորութիւններ, որոնք մեծ ծախսեր անելով՝ արդէն «դաշնային» եւ կուբորանների յարմար տեղերը մաքրում են ծաղիկեցնում են՝ տնկելով պտղատու ծառեր եւ կառուցանելով շէնքեր: Հիւանալի է Սօչիի շրջական եւ մանաւանդ ծովեզերքը. աչքի առաջ ունենալով այն, թէ վերջին երեք տարվայ ընթացքում Սօչին որչափ առաջացրել է, կարելի է գուշակել, որ մօտիկ ապագայում, իբրեւ ամառանոց, նա պիտի կարողանայ որոշ գիրք գրաւել Սեւ ծովի շրջանում: Ամառվայ սեզոնում Թուսաստանի ներքին գաւառներից գալիս է մի աչքի ընկնող բազմութիւն ամառանոցներում ապրելու եւ գլխաւորապէս ծովում լողանալու համար: Բայց Սօչին պատշաճաւոր կերպով չէ կարողանում զոհանել իր հիւրերին: Թէեւ քաղաքային վարչութիւնը սրտով փափագում է մաքրել փողոցները, չինել նոր մաքարներ, որ առեւտուրը զարգանայ, բայց չունենալով միջոցներ, սպասում է ուրիշ ձեռնարկողների: Ինչպէս երեւում է, մեր տեղական վաճառականները, եղածով գոհ լինելով, չեն շտապում պահանջի համապատասխան գործել եւ ինչպէս միշտ տեսնված է, այն ժամանակն են միայն զարթնում, երբ օտարը դրսից գալով արդէն իրանցից առաջ է անցնել:

ԵԿԱՆՏԻՆՕՊԱՐԻՑ մեզ գրում են. «Երեկ, ապրիլի 24-ին, ակմբանոցի դահլիճում հայոց դերասանական խումբը ներկայացրեց յետաձգված «Ընկերներ» պիեսայի փոխարէն «Աւան-Բայասի» կամ «Երեւանի առումն» պատմական պիեսը: Բաւականաչափ ժողովուրդ կար: Աս-

վեց...

Դրդապ ցիլիկը:

15 հազարից բաղկացած ամբողջ ցնցվեց ինչպէս մի մարդ... Սակայն՝ քաղաքային ուշքի գալով՝ նա իսկոյն եւ եթ թնդացրեց օդը որոտալից ծափահարութիւններով:

Միւրի չնորալի շարժումով յաղթական մատաղօր յայտնում է բազմակիսներին իր գոհունակութիւնը եւ զուարթերես, չըրպատված իր պաշտօնակից ընկերուհիներով, սիգաճեմ թողնում է կրկնութիւնը:

Կոյր-Ֆեմինիստ լինելուց շատ հետո՝ եւ կը ցանկայի, որ էմանսիպացիա ձեռք բերող կանայք իր երկրից, իր ազգից էլ լինէին նրանք, կրթեն, զարգացնեն եւ կարելիին չափ կատարելութեան հասցնեն իրանց մարմինը, մկանունները եւ ֆիզիկական բոլոր ընդունակութիւնները, ինչպէս այդ արեւ են եւ անընդհատ անում են մտաւոր ասպարէզներում: Եւ այդ բանը ոչ ի հարկէ, կրկնութիւն, ցուլամարտութեան կամ գոտեմարտութեան համար միայն, ոչ, այլ կենսութիւն, այն կենսութիւն համար, այսինքն՝ մի անմեղ թխահաւից, մի փոքրիկ մաւկից, մի թիկեւ որտեղ, երեք մատանկալի խորութիւն ունեցող մի առուակից, եւ այլ հազարաւոր կենսութիւն մէջ ամեն օր, ամեն ժամ պատահող այսպիսի բաներից սրտաճաք չը դառնալու համար:

Կը ցանկայի, ամենալիքով սրտով կը ցանկալի, որ էմանսիպացիա ձեռք բերող կանայք արժանապալել բարձրութեան վրա պահպանեն իրանց անունը, իրանց դիրքը, իրանց կոչումը թէ ընտանեկան չորս պատերում, եւ թէ հասարակութեան մէջ:

Այն ժամանակ միայն մենք կարող կը լինենք պարծնալ նրանց առաջադիմութեամբ:

Սերմայան

